ք. Երևան, Ս. Դավթի 87ա **<<14>> հունիս 2021թ**

Ա/Ձ ԻՐԻՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ, ՀՎՀՀ՝ 60510143,
Հասցե՝ Շիրակ, Գյումրի, Մ. Ավետիսյան փ., 37Ա, 16

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Հայտնում ենք Ձեզ, որ ըստ հարկային մարմնում առկա անձնական հաշվի քարտի տվյալների Դուք 14.06.2021 թվականի դրությամբ ունեք 66.000 դրամ չկատարված դրոշմանիշային վճարի պարտավորություն: Համաձայն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <բ> կետի, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում հարուցվել է վարչական վարույթ՝ չկատարված դրոշմանիշային վճարի պարտավորությունը գանձելու վերաբերյալ ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վարչական ակտ ընդունելու նպատակով:

Ի կատարումն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածներով վարչական մարմնին վերապահված պարտականությունների, առաջարկում ենք սույն ծանուցումը ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 3-րդ օրը, ժամը 11-ին ներկայանալ վարչական վարույթի լսումներին, կամ մինչև նույն ժամկետը ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ Ձեր գրավոր բացատրությունը և (կամ) առարկությունը հետևյալ հասցեով՝ ք. Երևան Ս. Դավթի 87ա:

Չներկայանալու դեպքում գործը կարող է քննվել Ձեր բացակայությամբ:

ՀՀ ՊԵԿ ԻՎ հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման

բաժնի գլխավոր մասնագետ Թ. Միքայելյան Digitally signed by MIKAYELYAN TEHMINE 6310770563

Հեռ. 011-54-91-91 /ներքին՝ 91-29/